## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի քաղաքային համայնքի /այսուհետ՝ Համայնք/ ղեկավարը հայտարարում է մրցույթ համայնքի ղեկավարի աշխատակազմում համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար**

**1.Համայնքի ղեկավարի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ (ծածկագիր՝3.3-1)**

**Երկրորդ կարգի մասնագետը՝**

ա/ բաժնի պետի հանձնարարությամբ կատարում է տնային այցելություններ, հայտնաբերում է անապահով ընտանիքներին, հաշվառում է սոցիալապես խոցելի խմբերին և աջակցում նրանց.
բ/ բաժնի պետի հանձնարարությամբ կազմում է իր սպասարկման տարածքի նպաստառուների նպաստի գործերը, ինչպես նաև պատասխանատվություն է կրում դրանց հավաստիությանհամար
գ/ իր լիազորությունների սահմաններում, ինչպես նաև բաժնի պետի հանձնարարությամբ նախապատրաստում ու բաժնի պետին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.
դ/ բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է իր սպասարկման տարածքի փաստաթղթային սպասարկումը, ապահովում է փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը.
ե/ բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների ու այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները.
զ/ բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.
է/ բաժնին դիմած քաղաքացիներին ապահովում է անհրաժեշտ խորհրդատվությամբ.
թ/ ընտանիքներին տեղյակ է պահում նպաստի վճարումը դադարեցնելու /կասեցնելու/, ինչպես նաև այդ ընտանիքի տվյալների փաստագրման ժամկետը լրանալու մասին՝ պարզաբանելով նրա իրավունքները ժ/ 2-րդ կարգի մասնագետը ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ /սոցիալական երաշխիքներ/ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ /սահմանափակումներ/:

**Երկրորդ կարգի մասնագետն ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված պարտականություններ:**

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա/ առնվազն միջնակարգ կրթության առկայություն.

բ/ ունի ՀՀ Սահմանադրության, 'Համայնքային ծառայության մասին ', 'Տեղական ինքնակառավարման մասին', 'Իրավական ակտերի մասին', 'Պետական նպաստների մասին' և 'Սոցիալական աջակցության մասին' Հայաստանի Հանրապետության օրենքների, ՀՀ կառավարության 1997 թ. դեկտեմբերի 9-ի 'ՀՀ-ում ընտանեկան նպաստի նշանակման և վճարման կարգի մասին' N 562 որոշման, աշխատակազմի, բաժնի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ/տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

դ/ ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

**Մրցույթը կանցկացվի 2012թ. ապրիլի 19-ին.. ' ժամը 13:00-ին, ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի քաղաքապետարանի շենքում ք. Ջերմուկ :**

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները և Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք /այսուհետ՝ քաղաքացիներ/:

Դիմող քաղաքացիները Ջերմուկի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմ կամ ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

ա/դիմում մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/,

բ/տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի դիպլոմի/ների/, վկայականի/ների/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

գ/արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

դ/մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,

ե/անձնագրի պատճենը:

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Քաղաքացիները մրցույթին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9.00-ից մինչև 18.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ ապրիլի 4-ը 2012թ.՝ մինչև ժամը 18.00-ը:

Մրցույթներին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Համայնքի ղեկավարի աշխատակազմ /ք.Ջերմուկ հեռախոս՝ 0287-2-13-07/ և ՀՀ Վայոց ձորի

*մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն հեռախոս՝ 0 (281) 23061/:*

***Ջերմուկի քաղաքային համայնքի ղեկավար՝*** ***Վ.Հովհաննիսյան***